ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 290

31 հուլիսի 2024 թվականի N - Ա

«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԷԴԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 226-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էդգար Հարությունյանի 2024 թվականի հուլիսի 29-ի գրավոր բացատրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

«Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված և տնօրենին վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էդգար Հարությունյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2024-07-31 16:23:26 ԱՐՄԵՆ
Հավաստվում է ԿԵՂԾ-ով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024 թ. հուլիսի 31
ք. Կապան